

Արեւմտահայագիտական Ուսմանց Կեդրոն

Յիշողութեան Վաւերագրումի Ծրագիր

Էլսա Անթոյեան Մամարեան
(1928-2021)

Հողը թեթեւ գայ վրան

Շնորհակալիք

Մեր խորհին շնորհակալությունը կը յայտնենք Պրն. Տանիէլ Ռուբէն Մամարեանին
որ սիրայօժար կերպով համաձայնեցաւ իր մօրը հետ սոյն հարցազրոյցը կատարել
2018-ին

Այս հարցազրոյցի ծանօթագրումին իրենց բերած անսակարկ նպաստին համար
Արեւմտահայագիտական Ուսմանց Կեդրոնը շնորհակալ է՝

Տոքթ. Վարդան Մատթէոսեանին,
Պրն. Կարօ Տէրունեանին
Վերապատուելի Վիգէն Զօլաքեանին
Պրն. Ելլէ Վերհաժին

Ծանօթագրող՝ ԳՄ

Էլսա Անթոյեան Մամարեան

Տեսերիզ Ա.

Թեմաներ

- Հարցազրուցատուին ընտանեկան պատմությունը
- Իր աշխատանքը
- Ամուսնությունը
- Ընտանիքին մեջ հայախօսությունը

Բարեւ, ինչպէ՞ս էք: Իմ անունս Էլսա Անթոյեան Մամարեան [է], Խորիւէ Մամարեանի հետ ամուսնացայ: Ծնայ,¹ քոյրերուս մեծն եմ: Հինգ հատ քոյր ենք: Ես մեծն եմ՝ առաջինը: Հայրիկս ուզեց իր մօրը անունը դնել, որ անունը Էլմաստ էր, բայց հոս կառավարութիւնը օտար անուն չէին դնէր,² ուրեմն իմ անունս Էլսա է, Էլսա Անթոյեան: Ինչպէս ըսի, հինգ հատ քոյր ենք, է՛հ, հայրիկս, մայրիկս որք էին, որքանոցէն եկան, ինչու որ Հայաստանէն³ երբոր քշեցին՝ հայրիկս 12 տարեկան էր եւ մայրս ինը տարեկան էր: Իմ ամուսինիս մեծ հայրը փաստաբան էր, եւ առաջ մեռցուցին անոնք որ կը գրէին, անոնք որ փաստաբան էին, [ինք] 43 տարեկանին մեռաւ, եւ վերջը ժողովուրդը սկսան տանել դէպի դուրս Հայաստանէն, հայրիկս ինը տարեկան էր: Դրացին թուրք էր եւ ըսաւ. «Մամուէլ եթէ դուն քրիստոնէութիւնդ ձգես նէ, քեզ իբրեւ զաւակ կ'ընդունինք, հոս կը մնաս եւ չես երթար»: Եւ հայրիկս ըսաւ որ ես քրիստոնէութիւնս չեմ ձգեր եւ գնաց որքանոց՝ Պէյրութի որքանոցը⁴:

Եւ իմ մայրս Հայկանուշ Պէրպէրեան, մայրը տարաւ երբոր սկսան տանել բոլոր հայերը, իր ձեռքովը տարաւ եւ որքանոցը դրաւ՝ ամերիկեան որքանոց,⁵ հոն դրաւ եւ մայրս կ'ըսէր որ երկու անգամ մայրս եկաւ զիս տեսաւ, եւ վերջը ալ չի տեսայ, մեռցուցին ըսաւ: Երկուքն ալ որքանոցն էին եւ հայրիկս աւելի պզտիկները, պզտիկներուն հոգ կը տանէր եւ մայրս կերակուր կ'եփէր եւ այլն, եւ այլն: Եւ հայրիկս 1923-ին, հոս Արիւնթինա եկաւ, սկսաւ աշխատիլ, դրամ հաւաքեց, ինչու որ՝ հօրեղբայրս եւ իր տիկինը ամուսնացած էին, կ'ըսեմ՝ հայրիկ ինչպէ՞ս որքանոցը՝ երբոր ամուսնացած էին: Ըսաւ [որ] ամուսնացածներուն տեղը տարբեր էր, աւելի տարբեր տեղ էր: Ուրեմն, հայրիկս կանչեց իր եղբայրը եւ տիկինը եւ ըսաւ. «Եղբայր երբոր կու գաս», - », - բնաւ անունը չէր տար, շատ մեծ սէր ունէր եւ յարգանք մեծ եղբօրը [նկատմամբ], բնաւ անունը չէր տար՝ Վարդան, եւ ես զաւակներուս կ'ըսէի. «Դուք գիտէ՞ք ինչ կը նշանակէ եղբայր»: Ինծի անչափ անուշ կու գար ականջիս եղբա՛յր, եղբա՛յր, շարունակ եղբայր կ'ըսէր, եւ մամաս՝ վերջը «Վարդան եղբայրս» կ'ըսէր, անունը չէր տար մինակ: Ուրեմն, հայրիկս ըսաւ որ եղբայր երբոր կու գաս նէ, յարմար աղջիկ մը բեր, որպէսզի ես ընտանիք կազմեմ, ամուսնանամ⁶: Եւ մայրս

¹ Ծնած է 24 Մարտ, 1928-ին:

² Տուեալ ժամանակաշրջանին Արժանթինի մէջ պարտադիր էր նորածիններուն անունները ընտրել սպաներէն անուններու ցանկէ մը:

³ Հայրը Խարբերդի Հապուսի գիւղէն է, իսկ մայրը՝ Կէմերէկ գիւղաքաղաքէն, որ կը գտնուի Մեքսստիոյ նահանգին մէջ՝ Մեքսստիոյ եւ Կեսարիոյ միջեւ:

⁴ Հարցազրուցատուն ծանօթ չէ որքանոցներու անուններուն, բայց 1920-ական թուականներուն Պէյրութի մէջ կային Near East Relief-ի (Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց) եւ ՀԲԸՄ-ի Միսուն Քէլէկեան որքանոցները:

⁵ Հարցազրուցատուն ծանօթ չէ նշեալ որքանոցին աշխարհագրական վայրին: Խօսքը ամենայն հաւանականութեամբ կը վերաբերի Near East Relief որքանոցին:

⁶ Լիբանանի մէջ երկու որքանոցներ հայ որբուհիները յատուկ կարգադրութեամբ՝ հայ թեկնածուներու կ'ամուսնացնէին: Թեկնածուներ կը ներկայանային նոյնիսկ հեռաւոր Ամերիկայէն: Անոնցմէ մէկը գուիցերիացի Եակոբ Քունցլերի խնամակալութեան տակ՝ Լեռնալիբանանի մէջ գտնուող Ղազիրի որքանոցն էր: Իսկ ամենէն յայտնին՝ Պէյրութէն 20 քիլոմէթր հիւսիս՝ Ճինիի շրջանը գտնուող Որբախնամի որքանոցն էր, որուն տնօրէնը Ղազարոս Ղալիկեան այս նպատակին համար հիմնադրամ մը ստեղծած էր: Նիւթական միջոցներ ապահովելու համար զանազան ձեռնարկներ կը կազմակերպէր, ինչպէս՝ երգահանդէսներ եւ ասեղնագործութիւններու ցուցահանդէս՝ աշխատցուած որբուհիներու կողմէ:

Հալեալի մէջ հօրեղբայրը ունէր, որ բան էր, ի՞նչ է անունը, կը քարոզէր, եւ նամակ մը գրեց ըսաւ. «Հօրեղբայր, Ամերիկայէն կը կանչեն, որպէսզի ամուսնանամ, ի՞նչ կ'ըսես»: Ըսաւ. «Աղջիկս եթէ լաւ երիտասարդ մըն է՝ քրիստոնէայ, գնա՛ եւ ընտանիք կազմէ՛»: Պատուելի էր իր հօրեղբայրը, եւ մամաս, մայրիկս եկաւ հօրեղբօրս հետ հոս, եւ ատանկ վերջը ամուսնացան հայրիկիս հետ⁷, ընտանիք կազմեցին, հինգ հատ աղջիկ ունեցան: Հայրիկս որչափ կը փափաքէր տղայ մը ունենալ, բայց Աստուած հինգ հատ աղջիկ խրկեց, բայց մենք հնազանդ էինք, չար չէինք, շատ հնազանդ էինք: Եւ շատ քրիստոնէայ էին եւ մեզի կը սորվեցնէին Աստուծոյ խօսքը, երգերը եւ այլն: Բոլորը գիտէնք: Եւ ես իբրեւ մեծ աղջիկը սկսայ աշխատիլ պզտիկուց, որպէսզի հայրիկիս մայրիկիս օգնեմ: Անօթութիւն՝ աղքատութիւն կար, բայց անօթութիւն չանցուցինք, ինչու որ հայրիկս պարտէզը, երկայն պարտէզ մը ունէր, ամէն տեսակ պտուղներ եւ այլն, կանանչեղէն ունէինք: Եւ ես իբրեւ մեծ աղջիկը պզտիկուց սկսայ աշխատիլ եւ օգնել, եւ այդպէս 19 տարեկանին նշանուեցայ իմ ամուսինիս՝ Խորիսէին հետ, Խորիսէ-Գեորգ, հայերէնը Գեորգ էր, քասիերէնը⁸ Խորիսէ դրի[ն], գրեցին: Ընտանիք կազմեցինք եւ լաւ ընտանիք մը՝ քրիստոնէայ ընտանիք, եւ շատ սիրով բոլորը, եւ չորս հատ զաւակ ունեցանք, Աստուած երեք հատ տղայ եւ աղջիկ մը տուաւ, երկրորդը աղջիկ է, միւս երեքը տղայ են: Բոլորն ալ միաբան են՝ սիրով: Փառք Աստուծոյ աղուոր ընտանիք ունիմ, սիրով եւ հայերէնը՝ հայրիկս միշտ կ'ըսէր. «Աղջիկներ հայերէն խօսեցէ՛ք, հայերէն»: Մենք բոլորս ալ հայերէն [գիտէինք], եւ հայրիկս ինծի սորվեցուց կարդալ եւ գրել հայերէն: Եւ երեք քոյրերս, եղբայր⁹ մը կու գար, շաբաթը անգամ մը՝ շաբթուան մէջ կու գար եւ քոյրերուս սորվեցուց կարդալ եւ գրել: Եւ եկեղեցին հայերէն կ'երգէինք առաջ, բայց վերջը կը թարգմանէին, երբոր երիտասարդները մեծցան՝ կը թարգմանէին քասիերէն լեզուով: Ատանկ հայերը շատ կը սիրէնք, միաբան ենք եւ Աստուծոյ փառք կու տանք: Եւ մայրս 1979-ին մեռաւ, հայրիկս՝ 80-ին: Եւ Աստուծոյ մինչեւ հիմա փառք կու տամ այդ ծնողքները որ ունեցանք, որ օրինակելի կեանք մը ատանկ...

Աս է իմ կեանքս, շատ շնորհակալ եմ: Ձեզի Աստուած օրհնէ բոլորդ ալ:

⁷ Ծնողները ամուսնացած են 1927-ին:

⁸ Գասիերէնը (Castellano) Սպանիոյ Գանթապրիոյ շրջանի բառբարն է՝ ժամանակակից սպաներէնի հիմնալեզուն: Ներկայիս Հարաւային Ամերիկայի մէջ խօսուող սպաներէնի տարբերակն է:

⁹ «Եղբայր» յորջորջումը կը վերաբերի իրենց բողոքական համայնքի անդամներէն Անդրանիկ Պալթայեանին, որուն տիկինը՝ Երանուհի Պալթայեանը արեւմտահայերէնի ուսուցչուհին եղած է նաեւ հացագրուցառուին, Տիկ. Էլիսայի որդիին՝ Տանիէլ Մամարեանին:

Էլսա Անթոյեան Մամարեան

Տետրիզ Բ.

Թեմաներ

- Հայախօսություն
- Հայերենի ուսումնառություն
- Աշխատանք
- Ընտանեկան օձախի հաստատում
- Հայ Աւետարանական Հոգեւոր Եղբայրություն

Անունս էլսա Անթոյեան է, Անթոյեան *տէ*¹⁰ Մամարեան:

Ի՞նչ պիտի պատմես այսօր : 00:11

Ի՞նչ պիտի պատմեմ: Մեր պգտիկությունը, մեր ծնողքը հայերեն կը խօսէին եւ մենք հայերեն կը խօսէինք: Տեղական լեզուն չէինք գիտեր: Երբոր դպրոց սկսայ երթալ վեց տարեկանիս, տեղական լեզուն՝ քասիերեն¹¹ *էսփանիոլ* լեզուն չէի գիտեր, ուրեմն մայրիկս գնաց, խօսեցաւ որ հայ ենք եւ շատ չեմ յիշեր: Սորվեցայ քասիերեն՝ սպաներեն եւ մինչեւ վեցերորդ կարգը գացի: *Մէ*¹², անկէ ետքը, 12 տարեկանին լմնցաւ: Ուրեմն, քանի որ հինգ քոյր էինք եւ աղքատութիւն կար, մայրս դրկեց *ֆիսթան*¹³ կարել սորվիլ: Ուրեմն ես սորվեցայ, *ֆիսթան* կը կարէի քոյրերուս, մայրիկիս, ինծի, եւ ինչպէս ըսի շատ աղքատութիւն կար, բայց անօթութիւն չանցուցինք, ինչպէս ըսի ուրիշ անգամ, եւ հայրիկս երբոր հողը գնեց¹⁴, տանտէրը կու գար ամէն ամիս գանձելու:

Այո՛, Կարծեմ թէ աստիկա ըսիր: 0:248

Է՞հ՛:

Կարծեմ թէ աստիկա ըսիր, եւ ի՞նչ կ'ընէիք դուք, քու քոյրերդ, նոյն հայերէնը... 02:18

Բոլորս ալ հայերեն կը խօսէինք:

Կը խօսէիք:

Այո՛, հայերեն կը խօսէինք: Դուրսը չէինք ելլար դրացիներուն հետ խօսիլ, տունին մէջ էինք:

Ատոր համար միայն հայերէն կը խօսէի՞ք: 02:47

Այո՛:

Բայց դո՞ւրսը:

¹⁰ «Տէ» (de) սպաներէնի սեռական եւ բացառական հոլովները արտայայտող նախադրութիւնն է, որ կը դրուի ամուսնացած կիներու արու կողակիցէն ստացած մականունէն առաջ՝ մատնանշելով իրաւական պատկանելիութիւն: Բառացիօրէն կը նշանակէ «Անթոյեան՝ Մամարեանին»: Այս սովորութիւնը արդէն հնամենի դարձած է:

¹¹ Տե՛ս այս հարցազրոյցին առաջին մասի թիւ 8 ծանօթագրութիւնը:

¹² «Մէ» սպաներէնով «այո» կը նշանակէ:

¹³ «*ֆիսթան*» թրքերէնով «հագուստ» կը նշանակէ:

¹⁴ Հարցազրուցատուին հայրը հողամաս մը գներ էր հայաբնակ Լանուս թաղը 1930-ին, ուր կառուցեր էր ընտանեկան բնակարանը եւ հողամասէն մաս մըն ալ վերածեր՝ բանջարանոցի: Հողամասի գինը ամսական մասնավճարով կը վճարուէր:

Ընկերուհի չունի՝ տեղական ընկերուհի: Վերջը ունեցայ, աւելի երիտասարդ էի նե: Ուրեմն, 13 տարեկանին սկսայ կարել, որպէսզի դրամ շահիմ, քիչ մը հայրիկիս օգնեմ, քանի որ ամիսէ ամիս կու գար տանտէրը՝ հողին տէրը, գանձելու: Եւ ատկէ ետքը, 14 տարեկանին *լա ֆապրիքա, գուօ սէ տիսէ՞, իսթէ՞*,¹⁵ գործատեղին սկսայ աշխատիլ: Ինչու աւելի 14 տարեկանէն վար չէին առնէր¹⁶: 14 տարեկանին գործատեղը...

Ի՞նչ տեսակ գործատեղ էր: 04:07

Ի՞նչ տեսակ, Շոթ¹⁷ եւ այլն, անուշեղէն *ֆապրիքար* կ'ընէին¹⁸: *Գո՞մէս*¹⁹:

Կ'ընէին: 04:19

Կ'ընէին, յետոյ մինչեւ 16 տարեկան աշխատեցայ այդ տեղը, որ մեր տունին մօտն էր, ատկէ ետքը, 16 տարեկանին՝ գործատեղ մը...

Ուրիշ գործատեղ մը գացիր: 04:44

Ուրիշ տեղ, որ անգլիացի էին: Հոն սկսայ: Դերձան, դերձան կը շինէին, բամպակէն դերձա[ն] կ'ընէին եւ...

Պզտիկ, պզտիկ գործատե՞ղ էիր: 05:02

Նօ, շատ մեծ, շատ մեծ գործատեղ մըն էր՝ մեծ:

Եւ ինչպէ՞ս այդտեղը գտար:

Ինչպէ՞ս:

Ինչպէ՞ս այդ տեղ[ը] գտիր:

Ա՛հ, ինչու դրացին, մեր դրացին այդտեղը կ'աշխատէր եւ ինծի ինքը, *ալ իսէֆէ գուօ սէ տիսէ՞, իսթէ*:²⁰

Ի՞նչ ըսաւ: 05:38

¹⁵ Սպաներէնով «la fabrica como se dice? Este...» արտայայտութիւնը կը նշանակէ «գործարանին անունը ի՞նչ էր, ըլլէ՞ր»:

¹⁶ Արժանքինի մէջ անչափահասներու աշխատանքային տարիքի սահմանափակումի օրէնքը գոյութիւն ունեցած է 1910-էն առաջ:

¹⁷ Շոթը արժանքինեան շոքոլայի ընկերութիւն է:

¹⁸ «*Ֆապրիքար* ընէլ» բառակապկցութիւնը «արտադրել» կը նշանակէ:

¹⁹ *Գոմէս* (comes) սպաներէնով «դուն կ'ուտես» կը նշանակէ:

²⁰ Սպաներէնով «al jefe. Como se dice? Este...» արտայայտութիւնը «գործատեղին, ինչպէ՞ս կ'ըսուի, է՛» կը նշանակէ:

Մէ, տարաւ եւ հոտ սկսայ աշխատիլ, եւ...

Ի՞նչ ըրիր հոն: 05:50

Ի՞նչ ըրի:

Այո՛: 05:54

Ի պուենո, էսթէ²¹ մաքինաներուն դերձան կը բաշխէի, բայց ատկէ ետքը ուրիշ տեղ, ուրիշ սեքսիոն:

Ուրիշ... 06:23

Մէ՛:

Մասը... 06:24

Հա՞:

Ուրիշ մասը... 06:26

Մի՛²² ուրիշ մաս, որ աւելի է էսթէ՛ շատ...

Աւելի դժուա՞ր էր միւսը, թէ աւելի թեթեւ էր: 06:35

Նօ, նօ, նօ, նօ, խնդիրը, լապորաթորիօ²³, հայերէնը, քասիերէնը:

Եւ ասիկա քու գործդ էր: 06:46

Այո՛, այո՛:

Մինչեւ ե՞րբ հոն աշխատեցիր: 06:51

Մինչեւ 19 տարեկանին հոն աշխատեցայ, գործեցի եւ վերջը նշանուեցայ Գեորգին հետ, եւ ինքը չուզեց որ ամուսնանալէ ետքը հող գործեմ:

Ի՞նչ տարի է: 07:15

Հա՞:

Ի՞նչ տարին ամուսնացար: 07:17

Ի՞նչ:

²¹ Սպաներէնով «y bueno este» արտայայտութիւնը «ուրեմն, է՛» կը նշանակէ:

²² «Si» սպաներէնով «այո» կը նշանակէ:

²³ «Laboratorio»-ն գործարանին տարրալուծարանն էր, ուր դերձանի որակը բարելաւելու համար փորձարկումներ կ'ընէին:

Ի՞նչ տարի, ի՞նչ տարի ամուսնացար: 07:20

Ի՞նչ տարի:

Այո՛: 07:24

Նշանուեցայ 1947-ին²⁴ եւ...

Եւ ըսէ՛, քու հայերէնդ ինչպէ՞ս սորվեցար: Ինչպէ՞ս քու հայերէնդ սորվեցար: Դուն ըսիր որ

Ինչո՞ւ... **07:48**

Տունդ միայն հայերէն կը խօսէիր: 07:37

Այո՛, հայերէն:

Բայց ինչպէ՞ս կրնաս կարդալ, գրել: 07:53

Հայրիկս ինծի սորվեցուց, ինչու դպրոց չի կար հայերէն, հայկական դպրոց չի կար այն ատեն:

Ինչո՞ւ, ի՞նչ տարի էր: 08:06

Հազար ինը հարիւր երեսունը, *պէյնթիոն չոյ...*

Երեսունը...

Սէհս...

Չորս...

Այո՛:

Այո՛:

Վերջը հայկական դպրոցները բացին²⁵, բայց հայրիկս ինծի սորվեցուց հայերէն գրել, կարդալ եւ հայերէն կը խօսէինք եւ միշտ քոյրերուս երբոր կը խօսէինք, կ'ըսէր. «Աղջիկներ հայերէն, աղջիկներ հայերէն խօսեցէ՛ք»:

²⁴ Ամուսնացած է քսան տարեկանին, 28 Փետրուար, 1948-ին

²⁵ Պուէնոս Այրէսի մէջ հայկական առաջին դպրոցը՝ Սահակեան Վարժարանը հիմնուած է 1928-ին, որուն յաջորդած է Արծրունի Վարժարանը 1929-ին: Ըստ հարցազրուցատուին՝ Տիկին Ելսային տղուն Տանիէլին, հարցազրուցատուին հայկական դպրոց չյաճախելու պատճառները մի քանին կրնային ըլլալ: Նախ՝ իրենց նիւթական անձուկ վիճակը, ապա դպրոցներու աշխարհագրական հեռաւորութիւնը ու այդ պատճառով դպրոց հասնելու դժուարութիւնները: Ոչ նուազ կարեւոր պատճառ կրնար ըլլալ կրօնական ազդակը, իրենց ընտանիքը ըլլալով ջերմեռանդ աւետարանական,

Եւ քու քոյրերդ ինչպէ՞ս է հայերէն... 08:48

Իմ քոյրերս, Եկեղեցիէն եղբայր²⁶ մը շաբաթը անգամ մը գործատեղէն երբոր կ'ելլար, մեր տունը կու գար եւ քոյրերուս սորվեցուց կարդալ եւ գրել:

Իր անունը ի՞նչ էր: 09:08

Ինչպէ՞ս:

Իր անունը ի՞նչ էր: 09:10

Իրարո՞ւ...

Իր անունը, ի՞նչ էր, անուն: 09:15

Անո՞ւնը:

Պալթայեան է՞ր: 09:20

Պալթայեան, այո՛, Պալթայեան: Շատ բարի մարդ մըն էր եւ քոյրերս սորվեցան: Եկեղեցի կ'երթայինք նէ, հոն հայերէն կը երգէինք:

Դուն կ'ըսես եղեղեցին, ի՞նչ տեսակ եղեղեցին, ի՞նչ խումբը, ի՞նչ եղեղեցիներ: 09:33

Ի՞նչ:

Եկեղեցի, ի՞նչ էր, լուսաւորչական եղեղեցի էր: 09:45

Նօ, Եղբայրութեան Եկեղեցի²⁷: Եղբայրութեան, հայերէն կ'երգէին: Ինչու մեր ծնողքը՝ մայրիկս, հայրիկս մեզի սորվեցուցին երգերը: Մենք գիտէինք երգել եւ Եկեղեցին, ինչպէս ըսի, հայերէն կը խօսէին, բայց երբոր մեծցանք եւ մասնաւորապէս երբոր տղաքները մեծցան նէ, որպէսզի չերթային՝ կը թարգմանէինք սպաներէն, քասիերէն լեզու եւ մենք՝ ես եւ չորս քոյրերս ծնունդին հայերէն երգ երգեցինք, բեմը ելանք, երգեցինք հայերէն:

Հիմա կը յիշե՞ս: Հայերէն երգերը կը յիշե՞ս տակաւին: 10:54

իրենց յարանուանութենէն դուրս՝ հետեւաբար իրենց կրօնական արժեքային համակարգին անյարիր կրթական հաստատութիւն մը դրկելը անյարմար կրնար նկատուիլ:

²⁶ Տե՛ս այս հարցազրոյցին առաջին մասի թիւ 7 ծանօթագրութիւնը:

²⁷ Հայ Եղբայրութեան Եկեղեցին պաշնօնական անունով ծանօթ է որպէս Հայ Աւետարանական Հոգեւոր Եղբայրութիւն, որ Հայ Աւետարանական Եկեղեցիէն անկախ ճիւղ մըն է՝ ծնունդ առած 1890-ին Կիլիկիա: Տարածուած եղած է Կիլիկիոյ եւ Պատմական Հայաստանի տարբեր հայաբնակ շրջաններու մէջ, ինչպէս Այնթապ, Ատանա, Մարաշ, Խարբերդ եւ այլն: Եղեռնէն ետք, Եկեղեցին իր հօտին նման տարտղնուած է աշխարհի տարբեր ցամաքամասերու վրայ: Խմբակցութիւններ հաստատուած են Լիբանան, Սուրիա, Իրաք, Եգիպտոս, Իրան, Ֆրանսա, Յունաստան, Արժանթին, Պրագիլ, Ուրուկուէյ, Ամերիկա, Գանատա եւ Աւստրալիա:

Հը՞:

Հիմա հայերեն երգերը կը յիշե՞ս: 10:57

Այո՛, կը յիշեմ՝ եւ շատ աղուոր երգեր են, եւ մայրս կը յիշեմ: Մայրս շատ անուշ մայր մըն էր՝ գթած, ողորմած: Հայրիկս սկիզբէն աւելի խիստ էր, բայց վերջը երթալով փոխուեցաւ աւելի: Մեզի կ'ըսէր. «Գառնուկս, ձագուկս», - ատանկ կ'ըսէր հայրիկս: Իմ մամաս «անուշիկս» կ'ըսէր: Շատ անուշ էր իմ մայրս, գթած ողորմած էր, շատ բարի, թե՛ մայր, թե՛ քրիստոնեայ, բարի օրինակ էր:

Շատ շնորհակալ եմ: Գալ անգամ քու պիտի խօսինք ուրիշ բաները, ուրիշ բաներ պիտի խօսինք: Շատ շնորհակալ եմ: 10:52

Շատ շնորհակալ եմ որ կը յիշեմ, կը պատմեմ մեր պատկերները, երիտասարդութիւնը, եւ մայրիկս 1979-ին մեռաւ, հայրիկս՝ 1980-ին: Եւ այսօրուայ օրը, ես քոյրերս Աստուծոյ փառք կու տանք, որ այդպէսի ծնողք ունեցանք, որ մեզի սորվեցուցին Աստուծոյ խօսքը, երգերը, օրինակելի կեանք ունեցան իրենք: Եւ երբոր կը տեսնամ որ աշխարհը հիմա փոխուեր է, բոլորովին չարութիւնը, գեշութիւնը, ուրեմն մեր զաւակներն ալ, մենք այդպէս սորվեցուցինք, մեծցուցինք: Զոր օրինակ, կ'ուզեմ Տանիէլին²⁸, երբոր երիտասարդ էր՝ կ'երթար որբանոցը, երկու-երեք պատիկներ կը բերէր եւ շաբաթ օրը, շաբաթ եւ կիրակի որ ընտանիքի մէջ ըլլային, եւ կը տանէր դուրսը ճաշարան եւ կիրակի օրը կը վերադարձնէր: Շատ բարի սիրտ ունէր Տանիէլը, ունի:

Շատ շնորհակալ եմ: 13:44

Պուենո, շատ լաւ:

²⁸ Հարցազրուցատուին որդին:

Էլսա Անթոյեան Մամարեան

Տետրիզ Գ.

Թեմաներ

- Ընտանեկան Պատմությունը
- Ծնողներուն որբանոցային օրերը
- Ընտանեկան յարաբերություններ
- Կենցաղային պայմաններ
- Հօրը եւ մօրը աշխատանքները
- Արժանքինի մեջ հայկական անձանուններու տուչութեան դժուարությունները

Բարեւ, բարեւ: 00:04

Բարեւ, ինչպէ՞ս էք:

Քու անունդ ի՞նչ էր: 00:07

Ի՞նչպէս էք, ինծի համար ուրախութիւն մըն է պատմել իմ ծնողքիս մասին, մեր մասին եւ այլն:

Քու անունդ ի՞նչ է: 00:22

Իմ անունս Էլսա Անթոյեան է: Տեղական, սպաներէն անուն պէտք էր ըլլար: Ուրիշ երկրի անուններ չէին դներ այն ատենը²⁹:

Ատոր համար քու անունդ Էլսա է: 00:45

*Լէ տիηηο*³⁰

Ուրեմն ատոր համար քու անունդ Էլսա է: 00:51

Ուրեմն իմ անունս Էլսա է, Էլսա:

Ո՞ւր, ո՞ւր ծնած ես: 00:58

Ծնայ քաղաքին մէջ, Մարտ 24-ին, 1928-ին:

Ի՞նչ քաղաք: 01:09

Ինչպէ՞ս:

Ի՞նչ քաղաք ծնած ես: 01:11

Ի՞նչ քաղաք: Քաղաքին մէջ:

Բայց ի՞նչ, ո՞ւր: 01:15

Հիւանդանոցը, Ռաուսոն³¹

Բայց ո՞ւր, Պուէնոս Այրէս: 01:19

Այո՛, Պուէնոս Այրէս:

Պուէնոս Այրէս, Արժանթինա: 01:22

Այո՛:

²⁹ Տե՛ս այս հարցազրոյցին առաջին մասի թիւ 2 ծանօթագրութիւնը:

³⁰ Սպաներէնով «le digo» արտայայտութիւնը «իբրէն կ'ըսեմ» կը նշանակէ:

³¹ Հիւանդանոց Պուէնոս Այրէսի մէջ: Պէտք չէ շփոթել մայրաքաղաքէն 1360 քմ. հարաւ գտնուող նոյնանուն քաղաքին հետ:

Հա՛, օքէ՛յ, Պուէնոս Այրէս, ուրեմն եւ քու ծնողքը, ի՞նչ կրնաս ըսել... 01:25

Իմ ծնո՞ղքս, հայրիկս խարբերոցի³² էր: Հայերէն լեզու կը խօսէր եւ մեզի հայերէն սորվեցուցին: Եւ մայրս...

Իր անունը ի՞նչ էր: 01:49

Ը՞, ինչպէ՞ս:

Իր անունը ի՞նչ էր: 01:51

Հայրիկիս անունը Սամուէլ էր, Սամուէլ Անթոյեան:

Եւ իր ծնողքը... 02:00

Հայրիկիս հարցուցի Անթոյեանները քանի՞ հատ էին, ըսաւ յիսուն հատ էին՝ կէսը լուսաւորչական, կէսը բողոքական: Ես բողոքական մասը ինկայ եւ ինծի պզտիկուց սորվեցուցին Աստուծոյ խօսքը:

Օքէ՛յ, եւ քու մա՞յրդ: 02:30

Մայրս կէմերեկցի³³ [էր], հայերէն լեզու կը խօսէր: 1906-ին ծնաւ, այո՛, իր հօրեղբայրը պատուելի էր: *Սիրիա նօ, էլ օթրօ, գոմօ՞ էս:*³⁴

Լիբանանի՞ն մէջ կ'ապրէի՞ր, կ'ապրէ՞ր: 02:50

Լիբանան, նօ:

Ո՞ւր, Սուրիա՞, Լիբանա՞ն, Լիբանա՞ն, օքէ՛յ, տեղ մը: 03:00

Այո՛:

Հիւսիսային Ամերիկա՞: 03:10

Չորս հատ գաւակ ունէին: Շատ աղուոր ընտանիք մըն էին:

Եւ ե՞րբ Արիւնթինայէն, Արիւնթինայէն ե՞րբ գացին: 03:16

Արիւնթինայէն երբ եկա՞ն:

Ըհը՛, եկան: 03:25

³² Տե՛ս այս հարցազրոյցին առաջին մասի թիւ 3 ծանօթագրութիւնը:

³³ Տե՛ս այս հարցազրոյցին առաջին մասի թիւ 3 ծանօթագրութիւնը:

³⁴ Սպաներէնով «Syria no, el otro, como es?» արտայայտութիւնը «Սուրիա չէ, միւսը ինչպէ՞ս է» կը նշանակէ:

Որբանոցն էին: Առաջ հայրիկս եկաւ: Սկսաւ աշխատիլ, դրամ հաւաքեց եւ
 հօրեղբայրս եւ տիկինը դրամ դրկեց, որպէսզի հոս գային:

Ներողութիւն, Մեծ Եղեռնի ժամանակը, քու հայրդ քանի՞ տարեկան էր: 03:48

Ո՛վ:

Մեծ Եղեռնի ժամանակը, քու հայրդ քանի՞ տարեկան էր: 03:56

Քանի տարեկա՞ն, ինը տարեկան, *տէ միլ նովեսիենթոս թրես ալ քինսէ:*³⁵

12 տարեկան: 04:13

12 տարեկան էր հայրիկս:

Եւ ի՞նչ եղաւ, ինքը Հայաստան մնա՞ց: Ո՛ւր, ո՞ւր... 04:18

Ո՛չ, երբոր տարին, թուրքերը տարին: Որբանոց գնաց:

Ո՞ւր էր որբանոցը, գիտե՞ս: 04:35

Լիբանան:

Ահա՛, գիտե՞ս ինչ, ի՞նչ տեսակ որբանոց, որբանոց էր: 04:37

Բողոքական որբանոց³⁶ մըն էր՝ շատ լաւ որբանոց մը:

Ամերիքական, թէ ինչ, ի՞նչ տեսակ: Անգլիական... 04:50

Անգլ... Անգլիա...

Անգլիական, թէ՞ ամերիքական: 04:56

Նօ՛, ամերիկեան էր:

Ամերիկեան է՞ր: 05:05

Այո՛:

Ուրեմն, ինքը հոն էր, Պէյրո՞ւթ, Պէյրո՞ւթը: Այդ որբանոցը Պէյրո՞ւթ էր՝ թէ ո՞ւր: 05:07

Լիպանօ, Պէյրութ, *սէ*:

Գիտե՞ս ուր էր, թէ՞ չէ: Լիբանանին ո՞ւր էր: 05:20

³⁵ Սպաներէն «de 1903 al 15» արտայայտութիւնը «1903-էն մինչեւ 15» կը նշանակէ:

³⁶ Խօսքը ամենայն հաւանականութեամբ կը վերաբերի Near East Relief-ին կամ անգլիական Friends of Armenia-ին: Վերջինս 1897-էն սկսած, Կիլիկիոյ մէջ որբանոցներ բացած է: Եղեռնէն ետք, գաղթական զանգուածներու հետ իրենց գործունէութիւնն ալ փոխադրուեցաւ մեծ թիւով գաղթականներ հիւրընկալած Լիբանան: Որբանոցներ հաստատուեցան Լեռնալիբանանի Շըմլէն, Այն Անուփ եւ Պրումանա գիւղերուն մէջ:

Լիբանան:

Լիբանան: 05:23

Այո՛:

Եւ քու մայրդ... 05:27

Եւ մայրս...

Քանի՞ տարեկան էր ինքը այդ Մեծ Եղեռնի ժամանակ: 05:30

Վեց տարեկան էր: Իր մայրը տարաւ ձեռքովը հող դրաւ որպէսզի ազատէր:

Եւ... 05:47

Եւ տնօրէնուիին հետ շատ սիրով էին, կարծես թէ մայրն էր: Ծունկի կու գային միասին կ'աղօթէին: Խոհանոցը տարաւ որպէսզի իրեն օգնէ եւ կերակուր կ'եփէր:

Քու մայրիկիդ անունը ի՞նչ է: 06:12

Հայկանոյշ Պէրպէրեան:

Իր ընտանիքը ուրիշ մարդիկ կայի՞ն, թէ չէ: 06:17

Ուրիշ՝:

Եղբայրներ[ը], թէ քոյրերը ազատեցա՞ն: 06:24

Եղբայր մը ուներ, բայց մեռաւ, եղբայրը մեռաւ: Մայրը երկու անգամ գնաց այցելեց որբանոցը եւ վերջը ալ չեկաւ, մեռցուցին:

Ահա՛: 06:40

Այո՛:

Ուրեմն եւ երբոր քու հայրդ Պուէնտս Այրէս... 06:40

Այո՛, հօրեղբօրս դրամ դրկեց, որպէսզի Արխենթինա գար: Եւ ըսաւ եղբայր, բնաւ անունը չէր տար, ի՞նչ յարգանքով, մեծ եղբայրն էր, Վարդան, անունը Վարդան էր: Երբեք Վարդան չըսաւ: Ես իմ զաւակներուս կ'ըսէի. «Դուք գիտէ՞ք ինչ կը նշանակէ եղբայր»: Ինծի անչափ անուշ կու գար իմ սրտիս: «Եղբայր երբոր գաս նէ, հետդ որբանոցէն աղջիկ մը բեր, որ ընտանիք կազմեմ»³⁷: Ուրեմն, հարցուց ո՞ր մէկը կրնայ ըլլալ, եւ այլն, եւ այլն: Մօրս ըսին եւ մայրս ինչ յարգանքով [էր], իր հօրեղբօրը նամակ մը գրեց, որ. «Հօրեղբայր, զիս Ամերիկայէն կը կանչեն, որպէսզի ընտանիք կազմեմ, ի՞նչ կ'ըսես դուն»: Եւ հօրեղբայրը ըսաւ. «Աղջիկս, եթէ լաւ երիտասարդ է, քրիստոնէայ երիտասարդ է նէ, գնա՛ եւ ընտանիք կազմէ՛»: Եւ հօրեղբօրս հետ եկան:

³⁷ Տե՛ս այս հարցազրոյցին առաջին մասի թիւ 6 ծանօթագրութիւնը:

Քանի՞, ե՞րբ, տարի[ն] ի՞նչ էր: 08:17

Ե՞րբ, ի՞նչ տարի:

Այո՛, 1923-ի՞ն: 08:23

Այո՛, 23: Հայրիկս 23: Մամաս, մայրիկս 24-ին եւ...

Ո՞ր կ'ապրէին: Այս առաջին օրերը երբոր անոնք... 08:40

Ինչպէս ըսի, *Հսթէ*, քաղաքին մէջ սենեակ մը, բոլոր երիտասարդները որ կու գային, երիտասարդները այդ սենեակին մէջ, ուրիշ սենեակի մէջ՝ աղջիկները: Ժամանակին երթալով ընտանիք կազմեցին ամէն մէկը ամուսնացան:

Երբոր անոնք ամուսնացան, ի՞նչ [կ']ընէին, ո՞ր կ'ապրէին: 09:14

Պուէնո, տեղ մը կ'ապրէին, երբորդ յարկը, սանդուխները քարէ չէին, տախտակ էին եւ հայրիկս, եւ հօրեղբայրս միասին կ'ապրէին: Եւ մայրս հայրիկիս ըսաւ որ. «Սամուէլ, Պրն. Սամուէլ», - առաջ շատ յարգանքով կը խօսէին տիկինները ամուսինին: Վերջը կամաց-կամաց ձգեցին ատիկա: «Պրն. Սամուէլ» կ'ըսէր հայրիկիս: Ի՛նչ յարգանք, ի՛նչ օրինակ: Ըսաւ. «Պրն. Սամուէլ, ես պիտի լոգնամ, Էլսային հոգ տար»: Ես տասուկէս ամսուան սկսայ քալել, 11 ամսուայ էի, հայրիկս մազը կը կտրէր եղբօրը եւ ես դուռը քիչ մը բաց գտայ, սկսայ սանդուխներէն իյնալ, երկու երեք սանդուխները վար կու գայի: Երբորդ յարկէն տիկին մը, որ եկեր էր դուրսէն, հոնտեղէն, ամենէն վարը լաթ կը լուար, այս ձայնը ի՞նչ է ըսաւ:

Ինքն ալ հա՞յ էր: 10:52

Այո՛: Եփրաքսի Մելոյեան: Եւ երբոր տեսաւ որ սանդուխներէն ես կու գամ, թելերը բացաւ եւ ես գետինը չինկայ եւ չի վիրաւորուեցայ, անոր գիրկին մէջ ինկայ: Երբոր գիրար կը գտնայինք, կը տեսնուէինք, միշտ եւ շնորհակալ էի, եւ կ'ըսէի՝ դուն ինծի ազատեցիր, այո՛:

Շատ լաւ, շատ լաւ, քու հայրդ ի՞նչ կ'ընէր հոս Արխէնթինայի մէջ, Պուէնոս Այրէսի մէջ: 11:32

Եւ *պուէնո*, բայց երբոր ես ինկայ նէ, եղբօրը ըսաւ՝ որ եղբայր պզտիկով երբորդ յարկը չենք կրնար ապրիլ, շատ վտանգաւոր է: Ուրեմն քիչ մը հեռու տեղ հող մը գնեցին³⁸ եւ մէկ սեն[եակ]՝ մեծ սենեակ մը շինեցին՝ եղբայրը եւ հայրիկս: *Քոսինա* ի՞նչ [է] հայերէն:

Խոհանո՞ց:

Հը՞:

Խոհանո՞ց:

³⁸ Տե՛ս այս հարցազրոյցին երկրորդ մասի թիւ 1 ծանօթագրութիւնը:

Ա՛, խոհանոց չունեին բոլորը այդ տունին մէջ: Ջուրը դուրսն էր: Է՛հ, աստանկ շատ դժուարութիւնով, աստանկ սկսան, սկսան միասին ապրիլ: Վերջը հօրեղբայրս տիկինը հիւանդացու թոքերէն եւ այլն: Ուրեմն տեղ մը կար որ հեռու էր, կ'ըսէին որ այդտեղի օդը օգտակար է, որ կրնային *գոն սալուտ...*³⁹:

Այդ տեղը ի՞նչ է, անունը ի՞նչ էր: 13:11

Գորտոպա⁴⁰:

Գորտոպա: 13:14

Գորտոպա: *Է չաթէ...*

Եւ օդը ինչո՞ւ... 13:15

800 *քիլոմէթր* էր:

Պուէնոս Այրէսէ՞ն: 13:19

Ինչպէ՞ս:

Պուէնոս Այրէսէ՞ն:

Պուէնոս Այրէսէն 800 *քիլոմէթր*, կ'ըսէին որ...

Եւ օդը աւելի... 13:27

Այդտեղի օդը կը նպաստէր, օգտակար էր, այո՛: Վերջը, յառաջիկային *չաթէ*, մենք քոյրերս կ'երթայինք հօրեղբօրս տունը՝ հեռու: Կ'երթայինք, կ'այցելէինք: Շատ սիրով էինք:

Ուրեմն, երբոր դուք հոն նոր տեղը կ'ապրէիք...

Ա՛, այո՛:

Այդ տեղը, այդ տեղին անունը ի՞նչ էր, այդ մասէն... 14:09

Լանուս Օուեսթէ⁴¹ եւ ամսէ ամիս կը վճարէին հողը, եւ տանտիկինը, տէրը կու գար ամէն ամիս դրամը գանձելու եւ ես պզտիկուց 13 տարեկանիս սկսայ գործել, որպէսզի հայրիկիս օգնէի, որպէսզի կարենային վճարել այդ հողը: Յետոյ կամաց-կամաց ուրիշ սենեակներ շինեցին, խոհանոց ըրին եւ այլն, շատ դժուարութիւնով եւ աստանկ-աստանկ առաջ գացին:

Բայց քու հայրդ, ներողութիւն, քու հայրդ ի՞նչ կ'ընէր: 15:10

³⁹ Սպաներէնով «con salud» արտայայտութիւնը «առողջութեամբ» կը նշանակէ:

⁴⁰ Գորտոպան Պուէնոս Այրէսէն 700 *քիլոմէթր* հիւսիս արեւմուտք գտնուող Արժանթինի երկրորդ մեծագոյն քաղաքն է:

⁴¹ Պուէնոս Այրէսի երկու հայաբնակ արուարձաններէն մէկը:

Իմ հայրս սափրիչ էր:

Եւ քու մա'յրդ: 15:19

Իմ մայրս վերջը, յառաջիկային երբոր ուրիշ տեղ շինեցին, ուրիշ պզտիկ խանութ մը դրաւ, որպէսզի օգնէր, այո՛...

Ի՞նչ տեսակ խանութ: 15:39

Դերձան, խոհանոցին *ռեփասատոր, սի*,⁴² անձեռոց եւ այլն, անանկ պզտիկ բաներ կը ծախէր, որպէսզի օգնէր եւ ես պզտիկուց սկսայ, *էսթէ ֆապրիքա*⁴³ աշխատիլ...

Ո՞ւր, ներողութիւն: 16:16

Հը՞:

Ո՞ւր: 16:18

Առաջ կար կը կարէի, ինչու որ հինգ հատ աղջիկ էինք:

Հա՛, ասիկա չէի գիտեր, դուն ի՞նչ... 16:28

Ես մեծն էի:

Դուն մեծն ես: 16:32

Ես մեծն եմ: Առաջին երեք քոյրերս...

Ե՞րբ ծնած ես, ե՞րբ ծնած ես դուն: 16:37

Ը՞:

Ե՞րբ ծնած ես: 16:41

[Ծնած եմ] 24 Մարտին, 1928-ին: Երեք քոյրերս որ ինձմէ վերջը ծնան, իրարու մէկուկէս տարեկան կը տանէինք⁴⁴ իրարմէ:

Օրէ՛, յետոյ...

Յետոյ չորրորդին՝ վեց տարեկան եւ ամենէն պզտիկը անունը Անխելա էր, որ կը նշանակէ հրեշտակ: Զոր օրինակ՝ երկրորդ քոյրիկս անունը Սրբուհի էր, իրեն⁴⁵ մօր անունը ուզեց դնել, բայց հոս չէին գրեր: Օտար անուններ չէին դներ: Ուրեմն Սանթինա դրին, որ կը մօտենար Սանթինա:

⁴² Սպաներէնով «ռեփասատոր, սէ» արտայայտութիւնը «խոհանոցի անձեռոց, այո՛» կը նշանակէ:

⁴³ Սպաներէնով «este fabrica» արտայայտութիւնը «այս գործարանը» կը նշանակէ:

⁴⁴ «Մէկուկէս տարեկան կը տանէինք իրարմէ» (nos llevabamos un año y medio) նախադասութիւնը սպաներէնի լեզուամտածողութեան արդիւնք է, որ տարիքային տարբերութիւնը ցոյց կու տայ սպաներէնի «llevar» (տանիլ) բայով:

⁴⁵ Խօսքը հարցազրուցատուին մօր մասին է:

Թարգմանությունը ասիկա է...

Ը՞, այո՛ :

Սրբուհի եւ Սանթինա ասիկա նոյնն է:

Այո՛ :

Ճիշդ թարգմանությունը... 17:41

Երբորդ քոյրս Էլիսա-Եղսայ էր՝ հայրիկիս *փրիման*, *փրիման* ի՞նչ է:

Զարմուհի՞ն, զարմուհի՞ն: 17:56

Հա՛, հա՛ :

Զարմուհին, եւ մի՞ւսը: 17:58

Միւսը՝ Ռոզա Վարդուհի:

***Օքէ՛:* 18:01**

Եւ ամենէն պզտիկը՝ Հրեշտակ-Անխելիթա, Անխելա:

Անճէլ:

Մէ՛:

Անճէլ, ուրեմն, ուրեմն գալ շաբաթ, գալ շաբաթ պիտի նորէն... 18:07

Շարունակե՞նք:

Պիտի շարունակենք եւ հիմա ասիկա լաւ է: Շատ շնորհակալ եմ: 17:18

Կը բաւէ՞:

Այո՛, այո՛, շատ շնորհակալ եմ: Գրեթէ քսան, քսան վայրկեան է, ասիկա քսան վայրկեան է: Շատ շնորհակալ եմ: 18:23

Էլսա Անթոյեան Մամարեան

Տեսերիզ Դ.

Թեմաներ

- Հարցազրուցատուի աղջիկտեսի պատմությունը
- Ամուսնությունը

Բարեւ Գրիգոր: Այսօր մայրս պիտի [պատմեմ], ասիկա իմ մայրս է, ինքը մեզ[ի] պիտի պատմեմ ինչպէս ինքը եւ Գեորգը՝ իր ամուսինը, ինչպէ՞ս կ'ըսես *սէ քոնսիերոն*,⁴⁶: **00:43**

Նշան...

Նշանուեցան: Հիմա ինքը պիտի, Էլմաստ պիտի ըսէ, հիմա՞, խօսի՛ր:

Բա[րեւ], *Սի ղո*:⁴⁷ Բարեւ Գրիգոր⁴⁸, ինչպէ՞ս ես: Քանի որ կը հետաքրքրուիս՝ որպէսզի պատմեմ ինչպէ՞ս եղաւ մեր ամուսնութիւնը, ինչպէ՞ս ճանչցայ Գեորգը: Գեորգին հայրը՝ Աշոտ Մամարեան հայրիկիս շատ բարեկամ էր թէ՛ եկեղեցիէն եւ [թէ՛] իրեն գործատեղը, ուր որ կ'աշխատէր՝ մօտ էր: Միշտ կու գար հայրիկիս տունը: Ուրեմն զիս շատ լաւ կը ճանչնար պզտիկուց: Պզտիկուց՝ որ ես պզտիկ էի, ինքը կ'երթար-կու գար եւ ինքը շատ կը սիրէր պզտիկները եւ հայրիկս Աշոտ եղբայր կ'ըսէր, ես ալ կէս բերնովս կ'ըսէի Աբոշար, Աբոշար: Ինքը ինծի կ'ըսէր. «Դուն ինծի Աբոշար կ'ըսէիր»: Ուրեմն կ'երթար-կու գար, կը խօսէր, որպէսզի ես տղային այո ըսէի: Ուրեմն բայց եկեղեցի չէր երթար: Ես իրեն ըսի որ, ես եկեղեցիի աղջիկ եմ, քու տղադ եկեղեցի չի երթար: Ինքը շատ լաւ քրիստոնէայ էր Աշոտը, Աշոտ եղբայրը: Ուրեմն շատ ճարպիկ էր: Շատ ճարպիկ էր, անանկ որ շատ իմաստութիւն ունէր, իմաստուն մարդ մըն էր եւ շատ բարի քրիստոնէայ էր եւ շատ կը սիրէր օգնել անոնք որ նեղութեան մէջ էին: Ուրեմն, տղուն ըսաւ որ Գեորգին, ես քեզի շատ աղուոր աղջիկ մը ունիմ քեզի համար: Ուրեմն, Գեորգը ըսաւ որ, եթէ ես չեմ սիրէր նէ, դուն կ'ըսես որ լաւ աղջիկ մըն է, բայց եթէ ես չեմ սիրէր նէ, ես պէտք է սիրեմ: Ուրեմն, պատճառով մը, ինչպէս ճարպիկ էր Աշոտը, առաւ տղան բերաւ մեր տունը: Մայրիկս պզտիկ խանութ մը ունէր եւ այդ նպատակով, որպէսզի մայրիկիս ցցնէ ապրանքները, քանի որ ինքը կ'աշխատէր խանութի մէջ, ուրեմն շատ բան էր, լաւ կը ճանչնար ապրանքները եւ այլն: Ուրեմն այդ պատճառով որպէսզի զիս տեսնար: Ես քովը, մայրիկիս քովն էի:

Քու մայրդ զիտէ՞ր որ աստոր համար կու գային: 03:50

Սի՛, այո՛, ինչու առաջ մայրիկիս կը խօսէր: Միշտ կու գար եւ մայրիկիս կ'ըսէր: Վերջը սկսաւ ինծի գովել իր տղան, որպէսզի ընդունէի: Ուրեմն, ես ատանկ պատասխանեցի. «Ինքը եկեղեցի չ'երթար, ես եկեղեցիի աղջիկ եմ», - եւ այլն: Ուրեմն, շատ լաւ, *էսթէ*, տեսաւ զիս, ուրեմն խօսեցան ժամանակ մ'անցուցին իմ ծնողքիս հետ: Ուրեմն, հայր ու տղայ գացին, քիչ մը քալեցին եւ Աշոտը կ'ըսէ. «Սիրեցի՞ր աղջիկը, հաւնեցա՞ր»: «Այո՛», - ըսաւ: Ու ի՞նչ ըրաւ, տղան ձգեց, վերադարձաւ մայրիկիս տունը, հայրիկիս տունը եւ ըսաւ որ. «Հայկանուշ քոյր, խնձոր ունիս նէ, ինծի խնձոր տուր»: Հա՛, ինքը կարգադրեց, շատ ճարպիկ էր, կարգադրեց ինքը իր....

⁴⁶ Սպաներէնով «se conocieron» արտայայտութիւնը «զիրար ճանչցան» կը նշանակէ:

⁴⁷ Սպաներէնով «sigo» արտայայտութիւնը «շարունակեմ» կը նշանակէ:

⁴⁸ Խօսքը ուղղուած է Արեւմտահայագիտական Ուսմանց Կեդրոնի հիմնադիր եւ տնօրէն Տոքթ. Գրիգոր Մոսկոֆեանին, որուն խնդրանքին ընդառաջելով հարցազրուցատուն սիրայօժարօրէն կը պատմէ իր ամուսինին հետ առաջին հանդիպումի պարագաններուն եւ ամուսնութեան մասին:

Խնձորով կարգադրեց: 05:02

Ինչպե՞ս:

Խնձորով կարգադրեց, խնձորով կարգադրեց: 05:04

Այո՛: Չեմ գիտնար ինչ սովորություն էր, ինչ, որ մեկ երկրին բանն էր սովորությունը: Ուրեմն, մայրս բերաւ: Ինքը, բոլորը ինչպէս ճարպիկ էր, բոլորը ինքը կարգադրեց:

Եւ ուրեմն վերջը խօսկապ:

Ուրեմն վերջը, մեկ ամիս վերջը, Հոկտեմբեր 12-ին:

Ի՞նչ տարի է: 05:38

1946: Ուրեմն երկու ընտանիքները, այն ատեն խօսկապ կ'ընէին, սովորություն էր, ժամացոյց մը դրին: Երկու ընտանիքները ժողվեցան իմ ծնողքիս տունը եւ կարգադրեց, շատ ճարպիկ էր:

Եւ վերջը դուք սկսաք միասին... 06:01

Ուրեմն, Հոկտեմբեր 27 Գեորգին ծնունդին օրն էր, Հոկտեմբեր 27: Հոկտեմբեր 12-ին խօսկապ եղաւ: Ի՞նչ կրնայի նուիրել: «Սուրբ Գիրք» մը նուիրեցի՝ կաշիէ աղուոր «Սուրբ Գիրք» մը, որպէսզի կարդար, քանի որ մենք քրիստոնեայ էինք:

Ի՞նչ տեսակ եկեղեցի կ'երթայիք: 06:33

Ես հայ եկեղեցի կ'երթայի:

Բայց ի՞նչ տեսակ, բողոքական է՞ր: 06:39

Եղբայրութիւն, *ս/հ*, բողոքական եղբայրութիւն, անունը...

Անունը ինչ է՞ր: 06:47

Եղբայրութեան Եկեղեցի⁴⁹:

Միայն Պուէնտս Այրէսի՞ [մէջ] կար այդ եղբայրութիւնը: 06:51

Եղբայրութի՞ւնը:

Է՛, չէ՛, Պէյրո՞ւթ...

Ամերիկայի մէջ, Պէյրութի մէջ...

Սան Փաուլօ... 7:04

⁴⁹ Տե՛ս սոյն հաարցազրոյցին երկրորդ բաժինի թիւ 27 ծանօթագրութիւնը:

Մի,

Ման Փառլոն ալ: 08:41

Շատ տեղեր, այո՛, կը ժողվէին, Եղբայրութեան Եկեղեցի:

Եւ վերջը ե՞րբ ամուսնացար: 07:13

Վերջը 1947-ին նշանտուք եղաւ: Առաջ նշանտուք կ'ընէին: Ուրեմն, բարեկամները, ընտանիքին ազգականները կու գային, եկան նշանտուք ըրին՝ *ֆիեսթա*⁵⁰ ինչպէ՞ս է:

Չեմ գիտեր, տօնը՞: 09:25

Մի՛, այո՛:

Եւ ե՞րբ ամուսնացար: 07:43

Պուենո, Էսթէ, ուրեմն, սկսաւ իմ հետս...

Փետրուար: 07:50

Մտիկ ըրէ: Երբոր խօսկապը եղաւ, սկսաւ եկեղեցի երթալ մեզի հետ, մեր ընտանիքին հետ սկսաւ եկեղեցի երթալ: Յետոյ Աստուծոյ խօսքը կը կարդար: Աղուոր, լաւ քրիստոնեայ երիտասարդ մը եղաւ: Ուրեմն...

Ե՞րբ ամուսնացար: 8:15

Նշանտուք եղաւ 1947-ին եւ Հոկտեմ[բ]ե...

Փետրուար: 08:25

Յունուար, Փետրուար 28-ին ամուսնացանք: Ամուսնացանք...

Քանի՞ տարի ապրեցար: 08:32

Քանի տարի ապրեցա՞նք: Շատ լաւ ընտանիք կազմեցինք, ինչու որ ինքը *Էսթէ*, շատ լաւ երիտասարդ էր՝ եւ քրիստոնեայ երիտասարդ: Քրիստոնէութիւնը սկսաւ սորվիլ եւ կատարել Աստուծոյ կամքը: Աղուոր ընտանիք կազմեցինք:

Ուրիշ, ուրիշ օր մը կրնանք քու ընտանիքիդ մասին խօսել, խօսիլ: 09:00

Պուենո:

Շատ շնորհակալ եմ Էլմաս: Քու անունդ Էլմա՞ստ, թէ Էլսա է: Ինչպէ՞ս է: 09:08

⁵⁰ Սպաներէնի մէջ «fiesta» բառը «խնճոյք» կը նշանակէ:

Հայրիկս Էլմաստ կ'ուզեր դնել, բայց չի չորին: Ինչպէս ըսի, երկրին սովորութիւնը օտար անուն չէին դնէր, ուրեմն Էլսա դրին:

Ուրեմն քու հայ անունդ Էլմաս է եւ քու սպաներէն... 09:30

Էլմաստ՝ իր մօրը, մօրը անունը, հայրիկիս մօրը անունը Էլմաս էր: Եւ Էլմաստ չի դրին: Պզտիկուց Էլմաստ կ'ըսէին, բայց վերջը-վերջը Էլսա եղաւ: Այո՛:

Օքէ, շատ շնորհակալ եմ: 09:50